ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԵՎ «ՇԻՐԱԿԻ Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ք. Երևան **« 10 » փետրվար 2022թ.**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը **(այսուհետ՝ Կողմ 1 կամ Պալատ)**, ի դեմս նախագահ Սիմոն Ալբերտի Բաբայանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը **(այսուհետ՝ Կողմ 2 կամ ՇՊՀ)**, ի դեմս ռեկտորի ժ/պ Երվանդ Սերյոժի Սերոբյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, բարձր գնահատելով Հայաստանում իրավունքի դերն ու նշանակությունը, իրավագիտակցության բարձր մակարդակ ապահովելու և մասնագիտական փորձ ու հմտություններ փոխանակելու նկատառումները, կնքեցին սույն Հուշագիրը հետևյալի մասին.

1. Հուշագրի շրջանակներում Պալատը և ՇՊՀ-ն պատրաստակամություն են հայտնում

1.1. Համատեղ իրականացնել ՇՊՀ-ի ուսանողների ուսումնական, մանկավարժական, արտադրական, հետազոտական պրակտիկաների կազմակերպման ծրագրերը՝ ՀՀ օրենքներին, այլ իրավական ակտերին համապատասխան:

1.2. Համատեղ կազմակերպել և իրականացնել տարբեր գործնական քննարկումներ, հանդիպումներ, կոնֆերանսներ՝ ՀՀ ներպետական իրավական համակարգի, ինչպես նաև միջազգային հարցերի լուծման վերաբերյալ, ներառելով ՇՊՀ-ի պրակտիկա անցնող ուսանողական կազմին:

1.3. Տալ պարզաբանումներ տարբեր իրավական հարցերի վերաբերյալ, որոնք կունենան պարզաբանման և խորհրդատվության կարիք՝ կիսելով միմյանց միջև ունեցած տարիների մասնագիտական փորձը և հմտությունները:

1.4. Տեղեկատվություն հայցելու և ստանալու՝ համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին:

1.5. Տեղեկատվություն հայցելու և ստանալու՝ երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում

Կողմերի գործունեությանը և մասնագիտացմանն առնչվող գիտագործնական, ինչպես նաև մասնագիտական և կազմակերպական բնույթի այլ ուղղություններով:

2 Լրացուցիչ պայմաններ

2.1. Պրակտիկան սկսվելուց առաջ Կողմ 2-ը ներկայացնում է պրակտիկանտների և մեթոդիստների ցուցակները (2 օրինակից), որոնք ներառում են սույն հուշագրի առաջին մասով նախատեսված աշխատանքերի իրականացումը:

3 Եզրափակիչ և անցումային դրույթներ

3.1. Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ:

3.2.Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ Հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն Հուշագրի անբաժանելի մասը կազմող առանձին արձանագրությամբ:

3.4. Հուշագիրը կնքված է հայերեն լեզվով 2 (երկու) հավասարազոր օրինակից:

3.5. Յուրաքանչյուր Կողմին տրվում է Հուշագրի մեկական օրինակ:

Հուշագիրը ստորագրող կողմերը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ	**«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ (ՇՊՀ)**
նախագահ՝ Սիմոն Բաբայան	**Ռեկտորի ժ/պ Երվանդ Սերոբյան**
ստորագրություն	ստորագրություն
Կ.Տ.	Կ.Տ.